

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Սյունիքի մարզ Մեղրի համայնք, Նոնաձորի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
Թեմա՝ Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառումը կենսաբանության
դասերին՝ որպես սովորողների ներգրավվածությունը բարձրացնող միջոց

Վերապատրաստող կազմակերպություն՝ Սյունիքի մարզ Կապանի №2 ավագ
դպրոց-կենտրոն

Ղեկավար՝ Ն.Զավադյան

Ուսուցիչ՝ Ռուզաննա Համարարձումյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԳԼՈՒԽ 1. ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....4

ԳԼՈՒԽ 2. ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ԴԱՍԵՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ

ՄԻՋՈՑ.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16 Error!

Bookmark not defined.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ -----17

ՀԱՎԵԼՎԱԾ 1 -----18

ՀԱՎԵԼՎԱԾ 2-----20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականությունը: Հասարակական զարգացման արդի պայմաններում դպրոցը կոչված է ձևավորելու ինքնուրույն, ստեղծագործ անհատականություն՝ պատրաստ լուծելու կարևորագույն խնդիրներ:

Տեղեկատվության աճող հոսքը, այդ զարգացած անհատահականություններից պահանջում է իրավիճակին արագ ադապտացվել, կողմնորոշվել և ժամանակին համարժեք քայլել: Թեմայի արդիականությունը մեծապես պայմանավորված է նրանով, որ կրթության նոր որակի հնարավոր չէ հասնել մանկավարժական հնացած մեթոդների կիրառմամբ: Փորձը ցույց է տվել, որ սպառվել է ավտորիտար դպրոցի հնարավորությունները՝ խիստ կարգապահությամբ, վախի, ճնշման ու արգելքների լավ մշակված մեթոդաբանությամբ: Ակտիվ ուսումնառության մեթոդների կիրառմամբ նոր ռազմավարություն մշակումը հնարավորություն կտա սովորողների ակտիվ ներծրավվածությունը դասերի ընթացքում բարձրացնելու համար:

Նորույթը: Սույն հետազոտության շրջանակում կատարած ուսումնասիրությունների, հարցումների միջոցով բացահայտած հիմնախնդիրներն ու դրանց լուծման համար առաջարկվող տարբերակներն էլ հանդիսանում են թեմայի նորույթը:

Նպատակը: Հետազոտության նպատակը կառուցվածքային և տրամաբանական սխեմաների, նորագույն մեթոդների ուսումնասիրությունն է՝ որպես կենսաբանություն առարկայի դասավանդման ու առավել լավ յուրացման մեթոդ:

Խնդիրները: Ուսումնասիրության նպատակին հասնելու համար աշխատանքում առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

1. ներկայացնել կենսաբանության առարկայի առավել լավ յուրացման համար կիրառվող ժամանակակից մեթոդների արդյունավետությունը, դրանց կազմակերպման և իրականացման միջազգային փորձը,
2. բացահայտել կրթության մեջ կիրառվող նորագույն մեթոդների նպատակը, զարգացման հեռանկարներն ու հիմնախնդիրները,
3. առաջարկել ՀՀ հանրակրթական դպրոցներում նորագույն կրթական մեթոդների մարտահրավերների հաղթահարման ուղիները,
4. ուսումնասիրել համապատասխան գրականություն,
5. կազմել դասապլաններ նշված մեթոդների կիրառմամբ և անց կացնել դասերը ըստ այդ դասապլանների,

6. հավաքագրել պլանները և վերլուծել դրանք:

Տեսական և մեթոդական հիմքերը: Հետազոտության տեսական հիմքն են կազմում ոլորտի հայրենական և արտասահմանյան հեղինակների կողմից տվյալ բնագավառում իրականացրած ուսումնասիրությունները: Այդ հեղինակներից են՝ Մ.Մ. Բոնդարովը ,Գ.Մ. Մուրթազին ,Օ.Ա. Պուստոխինան և այլոք:

Տեսական և գործնական նշանակությունը: Տեսական առումով հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ոլորտի գրականության ցանկը համալրելու համար, իսկ գործնական առումով հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել դպրոցներում կենսաբանության դասավանդման որակի բարելավման գործընթացներում:


**ԳԼՈՒԽ 1. ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ**

Ժամանակակից ակտիվ ուսուցման մեթոդները մեթոդներ են, որոնց ուղղված են ակտիվացնել աշակերտների մտածողությունը, բարձր ինտերակտիվությունը, մոտիվացիայի և հուզական ընկալման աստիճանը:

Վերջիններիս նպատակն է՝

- ✓ ակտիվացնել և զարգացնել աշակերտների ճանաչողական և ստեղծագործական
- ✓ ունակությունները,
- ✓ բարձրացնել կրթական գործընթացի արդյունավետությունը.
- ✓ ձևավորել և գնահատել աշակերտների մասնագիտական կարողությունները,
- ✓ խթանել թիմային աշխատանքի կազմակերպման և կատարման գործընթացը:

Ժամանակակից ակտիվ ուսուցման մեթոդները կատարում են հատուկ գործառույթներ, որոնցք էլ ներկայացված են ստորև բերված գծապատկերում.



Գծապատկեր 1 Ժամանակակից ակտիվ ուսուցման մեթոդների գործառույթները

Ճանաչողական գործառույթ: Այս գործառույթի շնորհիվ աշակերտը ոչ միայն ձեռք է բերում նոր գիտելիքներ, աշխարհայացք, կողմնորոշում հետագա մասնագիտության ընտրության հարցում, այլ նաև վերջինիս մոտ տեղի է ունենում ընդհանուր գիտական, մասնագիտական և սոցիալական իրավասության որոշակի մակարդակի ձևավորում:

Անհատականության զարգացման գործառույթ: Անհատապես զարգացած աշակերտները , որպես կանոն ունենում են սեփական ես և հստակ պատկերացում իրենց երազանքների, նպատակների, հետագա անելիքների ու հետագա մասնագիտության ընտրության հարցում: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման պայմաններում մրցունակ մասնագետի պատրաստումը պահանջում է, որ կրթության համակարգը առաջին հերթին կենտրոնացած լինի ապագա մասնագետի անձի զարգացման վրա:

Անձի սոցիալականացման և մասնագիտացման գործառույթ: Կրթությունը հոգևոր արտադրության ոլորտ է, որի կարևորագույն գործառույթը հենց մարդու՝ որպես սոցիալական էակի մասնագիտական պատրաստումն է: Մասնագիտականացումը պետք է դիտարկել որպես սոցիալականացման անբաժանելի մաս: Սա անձի՝ որպես մասնագետի ձևավորման գործընթացն ու արդյունքն է՝ ներգրավելով նրան մասնագիտական հարաբերությունների և մասնագիտական գործունեության համակարգում:

Հասարակությանը ինտեգրման գործառույթ: Հասարակության մեջ անձին լիիրավ անդամ դարձնելը, նրանց ինտեգրումն ու ստացված գիտելիքների ու պրակտիկայի հաշվին ինքնավստահության ձեռքբերումը համարվում է ակտիվ ուսուցման մեթոդների առանցքային գործառույթներից մեկը:

1 Ժամանակակից ակտիվ ուսուցման գործառույթներից են նաև՝

1. **Սոցիալական փորձի փոխանցումը** (գիտելիքներ, արժեքներ, նորմեր և այլն):
2. **Հասարակության պահպանումը**՝ Ժամանակակից ակտիվ ուսուցումը պահպանում է հասարակության համախմբվածության անհրաժեշտ մակարդակը, նպաստում է նրա կայունության պահպանմանը, հանգեցնում է հասարակության ուղղակի սոցիալական վերարտադրությանը՝ որպես մշակութային ամբողջականություն:
3. **Անհատի սոցիալականացումը**. սա հասարակության գոյատևման անընդհատ փոփոխվող պատմական պայմաններում հասարակության գոյատևումը պահպանելու և մեծացնելու համար որակյալ կադրերի պատրաստումն է:
4. Հասարակության անդամների, առաջին հերթին երիտասարդների **սոցիալական ընտրության ընդձեռումը** (սելեկցիա): Դրա շնորհիվ յուրաքանչյուր մարդ հասարակության մեջ զբաղեցնում է այն դիրքը, որը լավագույնս բավարարում է նրա անձնական և սոցիալական շահերը:
5. **Անձի մասնագիտական կողմնորոշման ապահովումը**. համակարգչայնացման, արտադրական նոր տեխնոլոգիաների ներդրման համատեքստում մեծանում է մասնագիտական ուղղորդման դերը: Երիտասարդ սերնդին անհրաժեշտ է մտածված սոցիալական քաղաքականություն, որի շնորհիվ աշակերտը հետագայում ձեռք կբերի իր անձին ու ժամանակին համապատասխան մասնագիտություն:

Այսօր հնարավոր է դառնում սահմանել մասնագիտական ուղղորդման համալիր համակարգ՝ որպես սոցիալական ինստիտուտ, որը ներառում է ժամանակակից մասնագիտական ծառայությունների մատուցում, որպես աշակերտների սոցիալական աջակցության համակարգ: Ապագա հասարակության մասնագիտական կառուցվածքը հաջողությամբ կանխատեսելու համար պետք է լավ իմանալ, թե ինչ մասնագիտություններ են անհրաժեշտ, ինչու և որքան:

Հաճախ է պատահում, որ մասնագիտություն ընտրելիս աշակերտները չգիտեն, թե ինչով է այն բնութագրվում, ինչ պահանջներ են դրվում ապագա մասնագետի անհատական որակների համար, ինչպես նաև հաշվի չեն առնում այդ մասնագիտության հետ կապված հեռանկարները: Միայն մասնագիտության ընտրությունը կարող է հանգեցնել նրան, որ ապագայում մարդը պարզապես չի ցանկանում աշխատել այդ ուղղությամբ: Ժամանակակից հասարակության


շրջանակներում աշխատաշուկային անհրաժեշտ են մասնագետներ, ովքեր ոչ միայն ունեն մասնագիտական գործունեության ֆունկցիոնալ պատրաստականություն, այլև ձևավորվել են որպես ստեղծագործ անձնավորություն: Ստեղծագործական գործունեությունը մանկավարժության մեջ սահմանվում է որպես նոր, նախկինում գոյություն չունեցող մտավոր կամ նյութական արտադրանքի ստեղծման գործընթաց: Ինչ վերաբերում է ուսուցման գործընթացին, ապա ստեղծագործականությունը դիտվում է որպես մարդկային գործունեության ձև, որն ուղղված է նրա համար բոլորովին նոր արժեքներ ստեղծելուն, որոնք ունեն սոցիալական նշանակություն, այսինքն. անձի՝ որպես սոցիալական սուբյեկտի ձևավորման կարևոր տարր են:

6. **Սոցիալ-մշակութային նորարարությունների ներդրումը.** Ժամանակակից ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են հայտնագործությունների և գյուտերի իրականացմանը, նոր գաղափարների, տեսությունների, հասկացությունների զարգացմանը:

Սոցիալական վերահսկողության իրականացումը. սա նպաստում է հասարակության կայունության պահպանմանը:

Ակտիվ ուսուցման մեթոդների օգտագործումը որպես ժամանակակից կրթական տեխնոլոգիաների բաղկացուցիչ մաս, պահանջում է հատուկ տեսական եվ գործնական գիտելիքների ձևավորում և կիրառում:

Ակտիվ ուսուցման մեթոդները թույլ է տալիս իրականացնել հետևյալ խնդիրները.



Գծապատկեր 2 Ակտիվ ուսուցման ունակությունների հիմնական նշանակությունները

Ակտիվ ուսուցման մեթոդները աշակերտների կրթական և ճանաչողական գործունեությունը բարձրացնելու միջոցներ են, որոնք խրախուսում են նրանց մտավոր և գործնական գործունեություն յուրացման գործընթացում ակտիվ լինել:

Ուսուցիչը չպետք է միտված լինի պատրաստի ներկայացնելու գիտելիք աշակերտներին: Ուսուցչի խնդիրն է, որ ուսանողները որոշ չափով ինքնուրույն ձեռք բերեն գիտելիքներ՝ ակտիվ ճանաչողական գործունեության գործընթացում՝ հիմնվելով ժամանակակից կրթական համակարգում կիրառվող ակտիվ ուսուցման մեթոդների վրա: Այսինքն, աշակերտները այդ գիտելիքները պետք է ձեռք բերեն փնտրտուքի, սեփական եզրահանգումների հիման վրա: Վերջիններս սեփական եզրահանգման կարող են գալ երկխոսության միջոցով, ինչպես ուսուցչի, այնպես էլ մեկը մյուսի հետ հաղորդակցվելով: Երկխոսության գործընթացում զարգանում են՝

- ✓ հաղորդակցական հմտությունները,
- ✓ խնդիրները թիմային լուծելու ունակությունը,
- ✓ մտքերն ի մի բերելու, հստակ շարադրելու ունակությունը:

Ակտիվ ուսուցման մեթոդներն ուղղված են՝ հետաքրքրություն առաջացնելու աշակերտների մեջ՝ ինքնուրույն ճանաչողական գործունեություն ծավալելու, այդ ճանաչողական խնդիրները լուծելու և ստացած գիտելիքներն ու հմտությունները հետագա խնդիրների լուծման մեջ կիրառելու համար:

Ակտիվ ուսուցման մեթոդները կարող են օգտագործվել տարբեր ուսումնական գործընթացի տարբեր փուլերում.

1-ին փուլ – գիտելիքների առաջնային ձեռքբերում: Սա կարող է լինել Դասախոսության, գրույցի, ուսումնական քննարկման տեսքով:

Փուլ 2 – գիտելիքների վերահսկում (համախմբում), կարող է օգտագործվել մեթոդներ, ինչպիսիք են թիմային մտավոր գործունեությունը, թեստավորումը և այլն:

3-րդ փուլ – մասնագիտական հմտությունների ձևավորում, գիտելիքների վրա հիմնված հմտությունների և ստեղծագործական կարողությունների զարգացում: Այս դեպքում հնարավոր է օգտագործել սիմուլյացված ուսուցումը, խաղային և ոչ խաղային մեթոդները:

Ակտիվ ուսուցման մեթոդները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

- ❖ ուսուցչի և աշակերտների միջև առկա պաշտոնականության բացակայությամբ,
- ❖ հուզականության, ցուցադրականության բացակայամբ,
- ❖ իրազեկվածության, սեփական փորձարկումների հիման վրա կատարած եզրահանգումներով գործնական հմտությունների ձևավորմամբ,

- ❖ դիմացինին հետ անկաշկանդ շփվելու և սեփական կարծիքը պնդելու աշակերտի ունակությամբ:

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման չափանիշների մեջ կարող ենք առանձնացնել հետևյալ ցուցանիշները.

- ✓ մեթոդների համապատասխանությունը դասավանդման սկզբունքներին.
- ✓ ուսուցման նպատակների և խնդիրների համապատասխանությունը.
- ✓ թեմայի բովանդակության համապատասխանություն
- ✓ ուսանողների կրթական հնարավորություններին(տարիք,

հոգեբանական, պատրաստվածության մակարդակ) համապատասխանություն

- ✓ առկա պայմաններին և վերապատրաստմանը հատկացված ժամանակի համապատասխանություն,
- ✓ համապատասխանություն կրթական օժանդակ միջոցներին և հնարավորություններին,
- ✓ համապատասխանություն հենց ուսուցիչների հնարավորություններին՝ հնարավորություններ որոշվում է ուսուցչի նախկին փորձով , մանկավարժ կարողություններով, ինչպես նաև անձնական որակներով:

Ակտիվ ուսուցման մեթոդների մեջ կարող ենք պայմանականորեն բաժանել իմիտացիոն և ոչ իմիտացիոն մեթոդների:

Ոչ իմիտացիոն մեթոդների մեջ կարող ենք առանձնացնել այնպիսի մեթոդները, ինչպիսիք են՝ դժվարյուրացվող դասախոսությունները, սեմինարները, թեմատիկ քննարկումները, թիմային երկխոսությունները, բանավեճերը, սահիկաշարերի պատրաստումը, գիտական-գործնական կոնֆերենցիաները:

Իմիտացիոն մեթոդներն իրենց հերթին բաժանվում են խաղային և ոչ խաղային մեթոդների: Ոչ խաղային մեթոդներից են օրինակ իմիտացիոն վարժությունները, թիմային թրեյնինգները, կոնկրետ իրավիճակների քննարկումը:

Խաղային մեթոդների մեջ կարող ենք առանձնացնել կազմակերպչական-ուսուցողական , ճանաչողական և մի շարք այլ խաղերը:

Դասախոսությունների մի քանի տեսակներ կան.

Խնդրահարույց դասախոսություն - այս դասախոսության միջոցով հարցի, առաջադրանքի կամ իրավիճակի նկարագրմամբ աշակերտները ձեռք են բերում նոր գիտելիքներ: Դասախոսության այս տեսակը աչքի է ընկնում իր ճանաչողության բնույթով: Աշակերտները համագործակցելով և երկխոսելով ուսուցչի հետ, իրականացնում են հետազոտական գործունեություն: Խնդրի

բովանդակությունը բացահայտվում է դրա լուծման որոնումների կազմակերպմամբ կամ ավանդական ամփոփման ու վերլուծության միջոցով:

Դասախոսություն-ասուլիս - անցկացվում է որպես գիտական և գործնական դաս՝ նախապես դրված խնդրով և հաշվետվությունների համակարգով, տևողությունը 5-10 ընդամենը: Յուրաքանչյուր ներկայացում է նախապես պատրաստված տրամաբանորեն ամբողջական տեքստ ուսուցչի առաջարկած թեմային համապատասխան: Ներկայացվածի ամբողջությունը թույլ կտան համակողմանի լուսաբանել խնդիրը: Դասախոսության ավարտին ուսուցիչը ամփոփում է ինքնուրույն աշխատանքի արդյունքները լրացնելով կամ պարզաբանելով տրամադրված տեղեկատվությունը և ձևակերպում է հիմնական եզրակացությունները:

Դասախոսությունը երկուսի համար (երկուական դասախոսություն) դասախոսության տեսակ է երկու ուսուցիչների միջև երկխոսության ձևով: Ցանկալի է որ ուսուցիչներից մեկը ներկայացնի տվյալ թեմայի տեսական, մյուսը՝ գործնական հատվածը: Որպես կանոն կատարվում է ցուցադրական քննարկում, ներգրավելով այդ քննարկմանը նաև աշակերտներին:

Դասախոսություն նախապես ծրագրված սխալներով (սադրիչ դասախոսություն)

Դասախոսության այս տեսակը նախատեսված է ուսանողների մշտական վերահսկողությունը, ուշադրությունը, կենտրոնացումը խթանելու համար Դասախոսության վերջում ուսանողները կատարում են թույլ տրված սխալների վերլուծություն:

Դասախոսություն-ցուցադրություն: Այս տեսակի դասախոսությունը իրականացվում և ուղեկցվում է տարբեր ցուցադրություններով՝ գծագրերով, կառուցվածքային և տրամաբանական դիագրամներով, աղյուսակներով, վիճակագրական ցուցանիշների վերլուծությամբ:

Դասախոսություն-երկխոսություն. Բովանդակությունը ներկայացվում է մի շարք հարցերի միջոցով, որոնց ուսանողները պետք է անմիջապես պատասխանեն դասախոսության ընթացքում:

Ինտերակտիվ դասախոսություն . այն իրականացվում է ուսուցչի և աշակերտների երկուստեք քննարկման, զրույցի, սահիկաշարերի , ուսումնական ֆիլմերի դիտման միջոցով:

Դասախոսություն-խորհրդակցություն. Դասընթացներ՝ դասախոսություն-խորհրդատվության ձևով: Ցանկալի է իրականացնել, երբ թեման զուտ գործնական բնույթ է կրում: Թեմայի հիմնական կետերի համառոտ ներկայացումից հետո ուսանողները տալիս են հարցեր ուսուցչին: Դրանց պատասխաններին կարող են հատկացվել դասի մինչև 50%-ը: Դասի վերջում տեղի է ունենում կարճ քննարկում՝ կարծիքների փոխանակում, որն ամփոփում է ուսուցիչը:

Ակտիվ ուսուցման ոչ իմիտայիոն մեթոդների մեջ կարելի է առանցնացնել հասկապես **քննարկումը**: Քննարկումը մտքերի կենտրոնացված և կանոնավոր փոխանակում է: Քննարկումը կատարվում է ուսուցչի և աշակերտների միջև՝ հավասարապես:

Ուղեղային փոթորիկը այն մեթոդներից է, երբ 6-8 աշակերտներ, համախմբվելով մեկ թիմում փորձում են ռացիոնալ ու բազմակողմնակի լուծումներ առաջ քաշել առաջադրված խնդրին:

Բլից-պատասխաններ մեթոդի շնորհիվ բացահայտվում է աշակերտների արագ կողմնորոշվելու, սիրամիտ ու տրամաբանական պատասձաններ տալու, սեփական մտքերը ի մի բերելու և ներկայացնելու հմտությունները:

«Ցածր ձայնով քննարկում»: Այս մեթոդը ենթադրում է փոքր խմբերով փակ քննարկման անցկացում, որից հետո ընդհանուր քննարկում, որի ընթացքում խմբի ավագի միջոցով ներկայացվում է խմբի կարծիքը: Մրցակցության միջոցով աշակերտները ձեռք են բերում նոր գիտելիքներ և թիմային քննարկման, սեփական կարծիքը ձևակերպելու, տրամաբանելու հմտություններ:

«Լարիբիրոս» մեթոդ: Քննարկման այս տեսակը կոչվում է նաև հետևողական քննարկում, այն ներկայացնում է քայլ առ քայլ ընթացակարգ, որտեղ յուրաքանչյուր հաջորդ քայլ կատարվում է մեկ այլ քայլով:

ԳԼՈՒԽ 2. ԱՎՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Հետազոտական աշխատանքը իրականացրել են 7-րդ և 8-րդ դասարաններում :Քանի որ վերոնշյալ դասարաններում սովորում են միայն մեկական աշակերտ՝ ընտրել են այնպիսի մեթոդներ,որոնք արդյունավետ էին ու ես հասա իմ նպատակին՝ յուրաքանչյուր դասարանի աշակերտը կարողացավ ինքնուրույն աշխատի, սովորողի հետ քննարկումները եղան արդյունավետ ու անկաշկանդ,սովորողը դասին ներգրավված էր ու ակտիվ:

7-րդ դասարանում,որտեղ սովորում է մեկ աշակերտ,կիրառել են **«Մտագրոհ»** մեթոդական հնարը,որը կիրառելի է ինչպես մեծ կամ փոքր խմբերով,այնպես էլ անհատական աշխատանք կատարելիս: Մինչ ուսումնական նյութը ներկայացնելը աշակերտի հետ քննարկեցի, թե ի՞նչ գիտի տվյալ թեմայի մասին, ապա նա պետք է կազմի ցուցակ գրի առնելով այն ամենը, ինչ գիտի կամ կարծում են, թե գիտեն թեմայի մասին: Այս փուլում կարևորը տրված թեմայի շուրջ նրանց գիտելիքները համակողմանի ներկայացնելն է, անկախ այն բանից՝ սխալ էն դրանք, թե՞ ճիշտ:

8-րդ դասարանում,որտեղ սովորում է մեկ աշակերտ,կիրառել են **«Տեքստի նշագրման համակարգի»** մեթոդը Տեքստն ընթերցելու ժամանակ աշակերտին առաջարկել են տեքստի նշագրման

համակարգ, որով ստորաբաժանվում է զետեղված տեղեկատվությունը: Մասնավորապես օգտագործվում են հետևյալ նշանները. (v)՝ հաստատում է իմացածը (զիտեմ),(-)՝ իմացածին հակասում է, (+)՝նոր տեղեկատվություն է(չզիտեմ),

(?)՝անհասկանալի է,(!)՝ հետաքրքիր է: Սովորողը տեքստը կարդալով՝ համապատասխանաբար լրացրեց հետևյալ աղյուսակը՝

v	-	+	?

Դասին աշակերտը ակտիվ էր, ներգրավված,մեթոդը՝ արդյունավետ:

Տվյալ հետազոտության համար հիմնական գերխնդիր է հանդիսանում՝

- ✓ բացահայտել ուսուցման ակտիվ մեթոդների բովանդակությունը դպրոցում կենսաբանության դասավանդման գործընթացում,
- ✓ Գործնականում կիրառել ակտիվ մեթոդներ,
- ✓ վերլուծել կենսաբանության դասերին ակտիվ ուսուցման մեթոդների ազդեցության արդյունավետությունը:

Ակտիվ ուսուցման մեթոդները մեթոդներ են, որոնք խթանում են ուսանողների ճանաչողական գործունեությունը, դրանք հիմնված են հիմնականում երկխոսության վրա, ենթադրում են կարծիքների ազատ փոխանակում որոշակի խնդրի լուծման ուղիների վերաբերյալ և բնութագրվում են աշակերտի ակտիվության բարձր մակարդակով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ակտիվ դասարաններում, եթե դրանք նպատակաուղղված են և լավ կազմակերպված, աշակերտները հաճախ սովորում են նյութը առավել լիարժեք և բովանդակալից: Կենսաբանության դասընթացում SS--ների կիրառումը զգալիորեն բարձրացնում է ուսուցման մակարդակը, երբ աշակերտների մոտիվացիան ցածր է:

Կենսաբանության դասերին համակարգչի օգտագործումը կարող է դառնալ ուսանողների ակտիվ և բովանդակալից աշխատանքի կազմակերպման նոր մեթոդ՝ դասերը դարձնելով ավելի տեսողական և հետաքրքիր:

Ակտիվ ուսուցման մեթոդները բաժանվում են երկու մեծ խմբի՝ խմբակային և անհատական: Խմբայինները միաժամանակ կիրառելի են որոշակի թվով մասնակիցների (խմբի), անհատականները՝ կոնկրետ անձի համար, ով իր ընդհանուր, հատուկ, մասնագիտական կամ այլ ուսուցումն իրականացնում է այլ աշակերտների հետ անմիջական շփումից դուրս:

Ուսուցման արդյունավետության արդյունքների վերլուծությունը, կենսաբանության դասերին ակտիվ ուսուցման մեթոդների կիրառումը դրական արդյունքներ է տալիս: Դասարանի բոլոր աշակերտները դասի ընթացքում աշխատում են հետաքրքրությամբ և ցանկությամբ, ինչը զգալիորեն բարձրացնում է դասի արդյունավետությունը:

Ուսուցումը բարդ գործունեություն է: Մեծահասակների գործն է կազմակերպել այն, որոշել բովանդակությունը, մտածել ուսումնական նյութի ներկայացման ձևերի, ի և

միջոցների մասին, ուղղորդել երեխային գտնել իր հետ վարվելու առավել ռացիոնալ ձևը և ցուցաբերել անհրաժեշտ օգնություն:

Խնդրի վերաբերյալ զիտական և մեթոդական գրականության ուսումնասիրությունը թույլ տվեց ինձ եզրակացնել, որ ակտիվ ուսուցման տեխնոլոգիան կրթական գործընթացի այնպիսի կազմակերպումն է, որում անհնար է ճանաչողական գործընթացին չմասնակցելը. հրապարակայնորեն զեկուցել, կամ դրա գործունեությունը կախված է իմբին հանձնարարված ճանաչողական առաջադրանքի կատարման որակից: Ասվածն ամփոփելու համար պետք է նշել, որ աշակերտների ճանաչողական գործունեության մակարդակը մեծապես կախված է դասերում ակտիվ մեթոդների, համապատասխան մեթոդական տեխնիկայի և ուսումնական միջոցների կիրառումից: Ուստի նրանց ընտրությունը պետք է դիտարկել որպես ժամանակակից կենսաբանության դասի կարեւորագույն պահանջներից մեկը: Պետք է հիշել, որ դասավանդման մեթոդներն և միջոցներ ընտրելիս պետք է հաշվի առնել այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են.

- ✓ ուսումնական նյութի բովանդակություն,
- ✓ ուսանողների տարիքային առանձնահատկությունները,
- ✓ դասի նպատակները,
- ✓ կենսաբանության դասասենյակի հագեցվածությունը ուսումնական նյութերով
- ✓ համակարգչային սարքավորումների առկայությունը

Դասարանում վերը նշված գործոնների առկայությունը թույլ է տալիս աշակերտներին, որ նրանք տիրապետեն կենսաբանական հասկացություններին, անհրաժեշտ հիմքեր ստեղծել դրանց հետագա օգտագործման համար, վերջիններիս զինել կրթական հմտություններով և ներառել նրանց ճանաչողական գործունեության մեջ:

Փորձը ցույց է տվել, որ կենսաբանության դասին հատկապես արդյունավետ են ակտիվ ուսուցման նորոգարական այնպիսի մեթոդների կիրառումը, ինչպիսի են

դերային խաղերը, ուղեղային գրոհը, կոնկրետ իրավիճակների վերլուծություն (դեպքի մեթոդ), սիմուլյացիոն խաղը (խաղի մոդելավորում), քննարկումը և այլն

Դասավանդման ինտերակտիվ մեթոդները նախապայման են ստեղծում աշակերտների անհատականության ինքնաիրացման համար:

Ուսուցման Ինտերակտիվ ձևերն ու մեթոդները կարող են օգտագործվել տարբեր կենսաբանությունառարկայի դասավանդման տարբեր փուլերում:

Նրանցից շատերը ունիվերսալ են, լավ պիտանի են կենսաության շատթեմաներ աուսումնասիրելու համար: Դրանք օգտագործելիս գրեթե բոլոր աշակերտները

ներգրավված են ճանաչողության գործընթացում, յուրաքանչյուր երեխայի տրվում է հնարավորություն՝ հասկանալու, թե ինչ նա գիտի և ինչ է մտածում: Թիմային գործունեությունը զարգացնում է սովորողների ճանաչողական հմտությունները : Ուսումնական նյութի միջոցների յուրացման գործընթացում որ ամեն մեկն իր ներդրումն է ունենում:Դասը անցնում է ընկերական մթնոլորտում, երեծաները օգնում են միմյանց, ինչը թույլ է տալիս ոչ միայն ստանալ նոր գիտելիքներ, այլև ինքնին զարգացնում է ճանաչողական, հաղորդակցման , յուրացման ու կենտրոնացման հմտությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդները օր օրի տարածում են գտնում շատ ու շատ ուսումնական հաստատություններում: Դպրոցը ևս զերծ չի մնում նորարական կրթական այնպիսի մեթոդների կիրառումից, ինչպիսիք են ակտիվ քննարկումները, ինտերակտիվ բանակցությունները, փորձարկումները, ՏՏ-ների կիրառմամբ նոր գիտելիքների ձեռքբերումը և այլն:

Խաղային մեթոդներով գիտելիքների ձեռքբերումը ևս շատ ու շատ առարկաների յուրացման հիմնական միջոց է հանդիսանում:

Կենսաբանությունը, լինելով հետաքրքիր, տեղեկատվությամբ ու փաստերով լի առարկա, ևս չէր կարող անմասն մնալ ուսումնական նորարարական մեթոդների կիրառումից: Առարկայի առավել լավ յուրացման համար այդ մեթոդներից շատերը կիրառվում հայրենական բազմաթիվ դպրոցներում, ինչը, ինչպես ցույց է տալիս փորձը, բավականին արդյունավետ է դարձնում ուսումնասիրվող նյութի յուրացման հարցում: Երեխաների մոտ ի հայտ է գալիս ոգևորվածություն առարկայի հանդեպ: Վերջիններիս մասնակցությամբ կատարված փորձերն ու եզրահանգումները կատարված թիմային աշխատանքների միջոցով հնարավորություն է տալիս նրանց մոտ կենտրոնացման, թիմում աշխատելու, ինքնագնահատականի բարձրացման, սեփական մտքերի շարադրման ու կարծիքի ձևավորման հմտությունների զարգանալուն:

ՕԳՏԱԳՈՂԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Бондарук М.М. Занимательные материалы и факты по общей биологии в вопросах и ответах 5-11 классы - Изд. Учитель: Волгоград, 2007.
2. Высоцкая М.В. Нетрадиционные уроки по биологии в 5-11 классах - Изд. Учитель: Волгоград, 2004.
3. Иванов Д.А. Управление качеством образовательного процесса.- № 6, 2007.
4. Лернер И.Я. Дидактические основы методов обучения, М., 2004.
Муртазин Г.М. Активные формы и методы обучения биологии.- Москва, Просвещение.- 1989
5. Орлов, А.А. Введение в педагогическую деятельность: учеб.- метод. пособие для студ. высш. пед. учеб. заведений / А.А. Орлов.- М.: Академия, 2004
6. Пономарева И.Н. Общая методика обучения биологии: учеб. Пособие для студентов пед.вузов. – М.: Издательский центр «Академия», 2008
7. Пустохина О.А. Урок в современной школе - Изд. Учитель: Волгоград, 2009
8. Слостенин, В.А. Педагогика: учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений / В. А. Слостенин, И. Ф. Исаев. - М.: Академия, 2002

Դասարան 7-րդ
Առարկա՝ Կենսաբանություն

Դասի թեմա՝ Նախակորիզավորների դերը բնական համակեցություններում և մարդու կյանքում: Բակտերիաների բազմազանությունը և դերը բնության մեջ և մարդու կյանքում: Պրոտիստներ: Նախակենդանիներ:

Դասի նպատակը՝

Բացատրել

- օգտակար և վնասակար բակտերիաների մասին,
- բնակարանում արևի ներթափանցման անհրաժեշտությունը

Թվարկել

- դրանց կիրառության ոլորտները,
- բակտերիալ հիվանդությունները, դրանցից պաշտպանվելու միջոցները

Վերջնարդյունքներ՝

Կկարողանա

- սննդամթերքը պահպանել փչանալուց,
- պահպանել բակտերիայով վարակված հիվանդին խնամքի կանոնները
- գիտակցել կաթնամթերքի օգտագործման անհրաժեշտությունը մարսողական ֆունկցիայի բնականոն ընթացքի համար:

Կարժևորի

- թարմ սննդամթերքի օգտագործման առավելությունը,
- խմելու ջրի մաքրության անհրաժեշտությունը,
- կեղտոտված ջրերում լողանալու վտանգավորությունը,
- սնվելու և անձնական հիգիենայի կանոնների պահպանման կարևորությունը:

Անհրաժեշտ նյութեր՝

- դասագիրք, պաստառներ, գունավոր մարկերներ, բակտերիաների գործունեության հետևանքով ստացված մթերքների նմուշներ ցուցադրման նպատակով (մածուն, թթվասեր):

Դասի ընթացքը՝

Անդրադառնալ նախորդ դասի հանձնարարականներին:

Խթանման փուլ՝ մեթոդ «Մտագրոհ»

Ուղղորդող հարցեր

Իմաստի ընկալման փուլ

Հանձնարարել սովորողին կարդալ դասանյութը և կրկնակի գրառումների մեթոդով լրացնել տետրում իր մեկնաբանությունները դասագրքի համապատասխան հատվածների վերաբերյալ:

Կշռադասման փուլ

Դասանյութը քննարկել պարբերություններով

Տնային առաջադրանք՝

Դասը սովորել

Լրացնել T –աձև աղյուսակ

ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դրական	Բացասական

Դասարան 8-րդ
Առարկա՝ Կենսաբանություն

Դասի թեմա՝ Մարդու օրգանները: Օրգանների համակարգերը: Օրգանիզմը որպես միասնական ամբողջություն:

Դասի նպատակը՝

Նկարագրել

- Մարդու և կաթնասուն կենդանիների օրգանների և օրգան համակարգերի ընդհանրությունների մասին,

Թվարկել

- Բոլոր օրգան համակարգերի բնութագրական հատկանիշները,

Բացատրել

- Օրգանների կառուցվածքի և գործառույթների համապատասխանությունը:

Վերջնարդյունքներ՝

Կկարողանա

Բնութագրել օրգան համակարգերի գործառույթների տարբերությունները:

Կարժևորի

- Մարդու և կենդանիների կառուցվածքային միասնությունը,
• Օրգանիզմը՝ որպես միասնական ամբողջություն:

Անհրաժեշտ նյութեր՝ ցուցապաստառներ, մարդու նորմալ անատոմիայի ատլաս:

Դասի ընթացքը՝

Անդրադարձ նախորդ դասի հանձնարարականներին:

Խթանման փուլ

Ուղղորդող աղյուսակի միջոցով որոշել սովորողի նախնական գիտելիքների մակարդակը:

Ներկայացնել և լրացնել կաթնասունների օրգան համակարգերը և դրանց կատարած գործառույթները:

Կաթնասունների օրգան համակարգեր	Գործառույթներ
---------------------------------------	----------------------

Իմաստի ընկալման փուլ՝ մեթոդ «Փոխներգործուն նշանների համակարգ»

Հանձնարարել սովորողին, որ ուշադիր կարդա դասանյութը և կարդալու ընթացքում համապատասխան հատվածների մոտ դնել հետևյալ պայմանական նշանները.

V = հաստատում է իմ իմացածը (գիտեմ)

+ = նոր տեղեկատվություն է (չգիտեմ)

- = իմացածին հակասում է

? = անհասկանալի է

! = հետաքրքիր է

Կշռադատման փուլ

Դասարանում աշակերտի հետ քննարկում ենք և աշակերտը լրացնում է գրատախտակին գծված աղյուսակը.

V	+	-	?	!

Աշակերտը ուսուցչի ուղղորդմամբ քննարկում է դասանյութի այն հատվածները, որոնք նշվել է «Նոր տեղեկատվություն է» և « Անհասկանալի է » պայմանական նշաններով:

Ուսուցիչը ուղղորդում է աշակերտի աշխատանքները և վերջինիս մասնակցությամբ քննարկելով պատասժխանում հարցերին:

Տնային առաջադրանք՝

§1, էջ 8-12, հարցեր 1, 2, 3, 5

Գծել և լրացնել T- ձև աղյուսակ օրգան համակարգերի և նրանց գործառույթների վերաբերյալ.

